



ՕՐԱՅՈՅՑ 2020

ՀԱՍԱՐԱԿ ԹՈՒԿԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
(Ըստ նոր տոմարի)

ԵՒ

ԲՈՒՆ ԹՈՒԿԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՏՇԺԲ ԵՒ ՏՇԺԳ=4512-4513

ԵՒ

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԿԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՌՆԿԹ ԵՒ ՌՆԿԺ=1469-1470



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՅԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
(301-303)



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո.
Եկեսցէ արքայութիւն քո.
Եղիցին կամք քո
որպէս յերկինս՝ եւ յերկրի:
Չհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր.

Եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք

թողունք մերոց պարտապանաց:

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն.

զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ
փառք յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ

Էջ Միածինն ի Յօրէ եւ լոյս փառաց
ընդ նմա.

Ձայնք հնչեցին սանդարամետք
անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին
Գրիգորի,

Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ
արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն
լուսոյ,

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԵՐԳ

Ամեն հայի սրտից բխած,

Լսիր այս ձայնն, ո՛վ Աստուած.

Երկար կեանք տուր Հայրապետին,

Երկար օրեր Հայոց Յօր.

Տէր, անսասան պահիր Դու միշտ

Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ալ.	Ալելուիք
Աղթ.	Աղոթք
Աղցմի.	Աղ ու հացից մի ասեր
Ապշ.	Ապաշխարութեան
Աւտրն.	Աւետարան
Թագ. յախտ.	Թագաւոր յախտեան
Ժմտ.	Ժամամուտ
Հետ.	Հետեւակ
Հմբ.	Համբարձի
Հնգ.	Հանգստեան
Հրց.	Հարց
Ճշ.	Ճաշու
Մեծ.	Մեծացուցէ
Մեսդ.	Մետեղիք
Մաղթ.	Մաղթանք
Մնկ.	Մանկունք
Մրգ.	Մարգարէից
Մրտ.	Մարտիրոսաց
Յար.	Յարութեան
Յին.	Յինանց
Յիս.	Յինակաց
Շրկ.	Շարական
Ողր.	Ողորմեա
Սդմ.	Սաղմոս
Ստղ.	Ստեղի
Սրբ.	Սրբասացութիւն
Քրպ.	Քարոպ
Օրհ.	Օրհնութիւն

Ի ՅԱՍԱՐԱԿ ԹՈՒՎԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
2020

Գիր տարւոյ (Տարեգիր)ՇՆ
Եօթներեակ (Կիրակագիր) ԵԴ
Վերադիր 3
Իններևտասներեակ (Ոսկեգիր) 7
Տանուտեր ՉՈՒԿՆ

Բուն ձայնքն՝ ԱԶ, ԲԶ, ԳԶ, ԴԶ Աջակողմեան դա-
տուն են սկսեալ ի Բուն Բարեկենդանէն:

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՔ

Գարնանամուտ եւ հասարակած Մարտի 20
Ամառնամուտ եւ արեւադարձ..... Յունիսի 21
Աշնանամուտ եւ հասարակած... Սեպտեմբերի 23
Զմեռնամուտ եւ արեւադարձ..... Դեկտեմբերի 21

Ծանօթութիւն. - *Օրացոյցիս ձախ եւ աջ լու-
սանցքների վերելում նշանակուած երկու տառե-
րը պէտք է կարդալ. Օ՝ օր ամսոյ, եւ Լ՝ օր Լուսնի:*

ԱՄՍԱՄՈՒՏՔ

Յունուար Չորեքշաբթի
Փետրուար.....Շաբաթ
Մարտ Կիրակի

Ապրիլ Չորեքշաբթի
 Մայիս Ուրբաթ
 Յունիս Երկուշաբթի
 Յուլիս Չորեքշաբթի
 Օգոստոս Շաբաթ
 Սեպտեմբեր Երեքշաբթի
 Հոկտեմբեր Հինգշաբթի
 Նոյեմբեր Կիրակի
 Դեկտեմբեր Երեքշաբթի

ՇԱՐԺԲ Լուսնի

Ամիս	Ծնունդ Լուսնի ●	Առաջին բառորդ ○	Լրումն Լուսնի ☺	Վերջին բառորդ ○
Յունուար	25	3	10	17
Փետրուար	23	2	9	16
Մարտ	24	2	9	16
Ապրիլ	23	1, 30	8	15
Մայիս	22	29	7	14
Յունիս	21	28	5	13
Յուլիս	20	27	5	12
Օգոստոս	19	26	3	11
Սեպտեմբեր	17	24	2	10
Հոկտեմբեր	16	23	1, 31	9
Նոյեմբեր	15	22	30	8
Դեկտեմբեր	14	21	29	7

**ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ
(ԵԿԵՂԵՑԱԿԱՆ)**

Տօների անուանումը	Նոր տոմար	Հին տոմար
Ս. ԾՆՈՒՆԴ	Յուն. 6	Յուն. 19
Անուանակոչություն	Յուն. 13	Յուն. 26
Ծնունդ Ս. Յովհ. Կարապետին	Յուն. 14	Յուն. 27
Բարեկ. Առաջաւորաց	Փետր. 2	Փետր. 9
Ս. Սարգիս	Փետր. 8	Փետր. 15
Տեառնընդառաջ	Փետր. 14	Փետր. 27
Տօն Ս. Վարդանանց	Փետր. 20	Փետր. 24
Բուն Բարեկենդան	Փետր. 23	Մարտ 1
Ս. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի վիրապն	Մարտ 28	Ապրիլ 4
Օր յիշատակի բռնադատուած եկեղեցականաց	Ապրիլ 6	Ապրիլ 13
Աւետումն	Ապրիլ 7	Ապրիլ 20
Ծաղկազարդ	Ապրիլ 5	Ապրիլ 12
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ	Ապրիլ 12	Ապրիլ 19
Յիշատակ սրբոց նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց Յեղասպանութեանն վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց	Ապրիլ 24	Մայիս 7
Երելումն Ս. Խաչի	Մայիս 10	Մայիս 17
Համբարձում	Մայիս 21	Մայիս 28

Տօների անուանումը	Նոր տոմար	Հին տոմար
Հոգեգալուստ	Մայիս 31	Յունիս 7
Բարեկ. Եղիակյան պահոց	Մայիս 31	Յունիս 7
Ս. Հռիփսիմեանց	Յունիս 8	Յունիս 15
Ս. Գայիանեանց	Յունիս 9	Յունիս 16
Ս. Յովհ. Կարապետին... (Ս. Շողակաթ)	Յունիս 11	Յունիս 18
Ս. Գրիգոր Լուսաւորչի եւն ի վիրապէն	Յունիս 13	Յունիս 20
Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի	Յունիս 14	Յունիս 21
Բարեկ. Ս. Գրիգոր Լուսաւորչի պահոց	Յունիս 21	Յունիս 28
Գիւտ նշխարաց Ս. Գրիգոր Լուսաւորչի	Յունիս 27	Յուլիս 4
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ	Յուլիս 2	Յուլիս 9
Բարեկ. Վարդավառի	Յուլիս 12	Յուլիս 19
Ս. ՊԱՅՃԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ	Յուլիս 19	Յուլիս 26
Բարեկ. Ս. Աստուածածնի	Օգոստ. 9	Օգոստ. 23
Տօն Շող. Ս. Էջմիածնի	Օգոստ. 15	Օգոստ. 29
Ս. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ	Օգոստ. 16	Օգոստ. 30
Բարեկ. Ս. Խաչի	Սեպտ. 6	Սեպտ. 20
Ծնունդ Ս. Կուսին	Սեպտ. 8	Սեպտ. 21
Ս. ԽԱԶՎԵՐԱՅ	Սեպտ. 13	Սեպտ. 27
Բարեկ. Վրգ. Ս. Խաչի	Սեպտ. 20	Հոկտ. 4

Տօների անուանումը	Նոր տոմար	Հին տոմար
Ս. Գեորգ	Սեպտ. 26	Հոկտ. 10
Վարազայ Ս. Խաչ	Սեպտ. 27	Հոկտ. 11
Տօն Ս. Թարգմանչացն	Հոկտ. 10	Հոկտ. 24
Գիւտ Ս. Խաչի	Հոկտ. 25	Նոյեմբ. 8
Ս. Հրեշտակապետացն	Նոյեմբ. 7	Նոյեմբ. 21
Բարեկ. Յիսնակաց	Նոյեմբ. 15	Նոյեմբ. 29
Ընծայումն Ս. Աստուածածնի	Նոյեմբ. 21	Դեկտ. 4
Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս (Ս. Գեղարդի ուխտի օր)	Նոյեմբ. 28	Դեկտ. 12
Բարեկ. Ս. Յակովբայ	Դեկտ. 6	Դեկտ. 20
Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ	Դեկտ. 9	Դեկտ. 22
Ս. Յակոբ	Դեկտ. 12	Դեկտ. 26
Ս. Դաւիթ մարգարէ	Դեկտ. 24	Յուն. 5
Ս. Ստեփաննոս	Դեկտ. 26	Յուն. 7
Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս	Դեկտ. 28	Յուն. 9
Ս. Որդւոցն Որոտման	Դեկտ. 29	Յուն. 11
Բարեկ. Ս. Ծննդեան պահոցն	Դեկտ. 29	Յուն. 11

Ծանօթութիւն.- Երկրորդ սինակում հին րոմարը վերածուած է նոր րոմարի ամսահաշուի, այսինքն՝ հին րոմարի ամսահաշուին անելացուած է 13 օր:

ՏՕՆԵՐ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

(ՊԵՏԱԿԱՆ)

Դեկտեմբեր 31 Յունուար 6	Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօներ (ոչ աշխատանքային օրեր են դեկտ. 31-ը, յունուարի 1-ը, 2-ը (Ամանոր) եւ յունուարի 6-ը (Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն)
Յունուար 28	Բանակի օր (ոչ աշխատանքային)
Փետրուար 20	Սուրբ Վարդանանց տօն՝ բարի գործի եւ ազգային տուրքի օր
Փետրուար 21	Մայրենի լեզուի օր
Փետրուար 28	Ադրբեջանական ԽՍՀ-ում զոհերի յիշատակի եւ բռնազաղթուած հայ բնակչութեան իրաւունքների պաշտպանութեան օր
Մարտ 8	Կանանց տօն (ոչ աշխատանքային)
Ապրիլ 7	Մայրութեան, զեղեցկութեան եւ սիրոյ տօն
Ապրիլ 24	Ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր (ոչ աշխատանքային)
Մայիս 1	Աշխատանքի օր (ոչ աշխատանքային)
Մայիս 8	Երկրապահի օր
Մայիս 9	Յաղթանակի եւ խաղաղութեան տօն (ոչ աշխատանքային)

Մայիս	15	Ընտանիքի օր
Մայիս	16	Ուսանողների եւ երիտասարդների օր
Մայիս	28	Հանրապետության տօն (ոչ աշխատանքային)
Յունիս	1	Երեխաների իրաւունքների պաշտպանության օր
Յունիս	14	Բռնադատուածների յիշատակի օր
Յունիս	14	Սուրբ Էջմիածնի տօն
Յուլիս	5	Սահմանադրութեան օր: Նոյն օրը նշուում է նաեւ որպէս պետական խորհրդանիշների օր (ոչ աշխատանքային)
Սեպտեմբեր	1	Գիտելիքի, գրի եւ դպրութեան օր
Սեպտեմբեր	21	Անկախութեան տօն (ոչ աշխատանքային)
Հոկտեմբեր	5	Ուսուցչի օր
Հոկտեմբերի	10	Սրբոց Թարգմանչաց տօն
Նոյեմբեր	10	Տեղական ինքնակառավարման օր
Դեկտեմբեր	7	Երկրաշարժի զոհերի յիշատակի օր
Դեկտեմբեր	9	Ցեղասպանութիւնների դատապարտման եւ կանխարգելման օր

ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԹՈՒՎՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Ա	1	Ժ	10	Ճ	100 (19)	Ռ	1000 (28)
Բ	2	Ի	20 (11)	Մ	200 (20)	Ս	2000 (29)
Գ	3	Լ	30 (12)	Յ	300 (21)	Վ	3000 (30)
Դ	4	Խ	40 (13)	Ն	400 (22)	Տ	4000 (31)
Ե	5	Ծ	50 (14)	Շ	500 (23)	Ր	5000 (32)
Զ	6	Կ	60 (15)	Ո	600 (24)	Ց	6000 (33)
Է	7	Հ	70 (16)	Չ	700 (25)	Ի	7000 (34)
Ը	8	Ձ	80 (17)	Պ	800 (26)	Փ	8000 (35)
Թ	9	Ղ	90 (18)	Ջ	900 (27)	Ք	9000 (36)

Ծանոթություն.- Փակագծերում տրուած թուերը վերաբերում են միայն Տարեգրին, այսինքն՝ Ի տարեգիրը պետք է կարդալ 11, ոչ թե՝ 20:

**ՊԱՇՏՕՆ ՀՈԳԵՅԱԼԳՍՏԵԱԼ Ի ՏԵՐ ՆԼՁԵՑԵԱԼ
ՅԱԼԷՏ ՕՐՀՆԵԱԼ ԲԱՐԵՐԱՐԱՑ ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻՑ
ԲԱՐԵՐԱՐԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ**

Յուևուար

1. Բարերարք Էդուարդ եւ Ժանետ Մարտիկեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Էդուարդ եւ Հելեն Մարտիկեան, Տիգրան եւ Սերինե Գըրք:
2. Ի հանգիստ բարերար Ջոն Սթիվընս (ԱՄՆ):

Ապրիլ

3. Բարերարք Գագիկ Գալստեան եւ Աիդա Խաչատրեան (Հայաստան), ի հանգիստ համօրէն ննջեցելոց Յովիկեան, Գալստեան եւ Խաչատրեան գերդաստանացն իւրեանց:
4. Բարերար Սանդրա Շահինեան Լայթներ (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրոյ՝ Վաղարշակի եւ Շուշանկի Շահինեան: Բարերար Ջիմ Լայթներ (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս մեծ հօրն իւրոյ՝ Ջորջի Լայթներ:
5. Բարերարք Ջերալդ եւ Փաթրիսիա Թրբանճեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Յակոբայ եւ Պայծառի Թրբանճեան:

Մայիս

6. Բարերարք Հրաչ եւ Սիւզան Թուֆայեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն՝ Յարութիւնի եւ Սիրանոյշի Թուֆայեան:

-
7. Բարերարք Պետրոս եւ Աննա Ժարժատեան Օրունճակճիէլ (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Մարտիրոսի եւ Վարսէնի Ժարժատեան Օրունճակճիէլ, Զաննայի Զըտըրշահ:

Յունիս

8. Բարերարք Սարգիս եւ Զուլթ Բեդեւեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Սկրտչի եւ Պայծառի Բեդեւեան, Գառնիկի եւ Ալիսի Շահբազեան:
9. Բարերար Էդուարդօ Էօրնեկեան (Արգենտինա), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրոյ՝ Փանոսի եւ Սուրբինա Բագրատունի Էօրնեկեան:

Յուլիս

10. Բարերարք Գառնիկ եւ Անահիտ Եակուբեան (Սիրիա), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Աւետիսի եւ Պերճանուշի Եակուբեան, Գեորգայ եւ Արշակուհույ Չաթալպաշեան:

Օգոստոս

11. Բարերար Բոբի Յակոբեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս կողակցին՝ Սարգսի Յակոբեան, եւ ծնողացն՝ Գրիգորի եւ Արաքսեայ:
12. Բարերարք Նազար եւ Արտեմիս Նազարեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Լեւոնի եւ Սաթենկի Նազարեան, Նիկողոսի եւ Մարիի Թովչեան:

Սեպտեմբեր

13. Ի հանգիստ բարերար Սարգսի Գաբրիելեան (ԱՄՆ):
14. Բարերարք Հայկ եւ Էլզա Տիտիզեան (Անգլիա), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրեանց՝ Յակոբի եւ Խնկաբերի Տիտիզեան, Վարդանի եւ Շաքէի Ազիրեան:
15. Բարերար Տիգրան Իգմիրլեան. (Շուէյցարիա), ի հանգիստ հոգելոյս ծնողացն իւրոյ՝ Սարգսի եւ Մարիի Իգմիրլեան:
16. Բարերարք Ջոն եւ Քրիստինա Քիւրքչեան (Անգլիա), ի հանգիստ հոգելոյս ծնողացն՝ Սարգսի եւ Աստղկի, եղբօրն՝ Ջորջի Քիւրքչեանի, Ֆլորա Աբշեանի:

Հոկտեմբեր

17. Բարերարք Վաչէ եւ Թամար Մանուկեան (Անգլիա), ի հանգիստ հոգելոյս հարցն իւրեանց Եղիշէի Մանուկեան եւ Գառնիկի Կարայեան:

Նոյեմբեր

18. Բարերարք Սամուէլ եւ Էթերի Կարապետեան (Ռուսաստան), ի հանգիստ հոգելոյս մօրն իւրոյ Ամալեայի Կարապետեան:

Դեկտեմբեր

19. Բարերարք Պերճ եւ Վերա Սեդրակեան (ԱՄՆ), ի հանգիստ հոգելոյս հարցն իւրեանց՝ Հմայեակի Սեդրակեան, Նուբարի Նազարեան:

ՅՈՒՆՈՒՎԱՐ

31 ՕՐ



ԱՅՏԵՂՋԻԻՐՆ

- 1 † ԴԶ. ԴԿ. Գ օր Ս. Ծննդեան պահոց: 6
Կաղանդ, Տարեմուտ: Օրհ. Ապշ. դկ.
Քրիստոս Աստուած: Զրց. Ապշ. դկ. Դ.
Օրհնեալ Տէր Աստուած օրհնեալ:
Մնկ. դկ. *Է անուն:* Ժմտ. *Որ ըստ ամե-*
նայն: Եշ. շրկ. դկ. *Փառաբանութիւն:*
Ճշ. ընթ. (Եբր. 12.5-17: Ղկ. 20.41-21.4): Զմբ.
դկ. *Մոցեն:*

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի
Մաղթանք Զայրապետական:**

- 2 ԵՂ. ԱՁ. Դ օր Ս. Ծննդեան պահոց: 7
Օրհ. Ապշ. ամ. *Յայր բապումողորմ:*
Զրց. Ապշ. դկ. Ե. *Օրհնեալ ես:* Մնկ.
ամ. *Չառաւօտու:* Ժմտ. *Որ ի Յօրէ:* Եշ.
շրկ. գձ. *Քրիստոս Աստուած:* Զմբ. ամ.
Ինձ օգնութիւն եւ Զամբարձի:

- 3 **Ուր. ԱԿ. Ե օր Ս. Ծննդեան պահոց:** 8
 Օրհ. Ապշ. ակ. *Շով կենցաղոյս:* Հրց. *Հնգ. գկ. Բանդ Աստուած:* Մնկ. *Խաչի*
 ակ. *Սեղան քո Տէր:* Ժմտ. *Որ ըստ*
ամենայն: Եշ. շրկ. բկ. *Որյանէից:* Հմբ.
 ակ. *Օգնական:*
 ○ **Առաջին քառորդ Լուսնի:**
- 4 **Շբ. ԲԶ. 2 օր Ս. Ծննդեան պահոց:** 9
 Սրբոցն Բարսղի Հայրապետին եւ
 եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն,
 Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապե-
 տին եւ Աբբայ Եփրեմի Խուրին Ա-
 սորոյ: Օրհ. գձ. *Որ համանման:* Հրց.
 դձ. *Սքանչելագործ,* իւր սարօքն: Մնկ.
ստղ. դկ. Լուսապայծառ: Ժմտ. *Չհայ-*
րապետականն: Եշ. շրկ. *գձ Չառաջ-*
նորդս: Ճշ. ընթ. (Առ. 11.2-11: Ես. 4.2-6: Կդ.
 1.21-29: Յհ. 10.11-16): Հմբ. ամ. *Սուրբ ես*
Տէր եւ Երկնաքաղաքացին:
- 5 **ԴԿիր. ԲԿ. Երազալոյց Ս. Ծննդեան** 10
եւ Աստուածայայտնութեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի: Չկնի Աս-
 տուած անեղին երգ՝ *Չայնիւ առ քեզ:*
 Օրհ. բձ. *Ուրախացիր Սրբուհի* (յա-
 տեանն), իւր սարօքն: Մեծ. դձ. *Ծա-*
գումն հրաշալի: Իւղաբերից Աւե-

տարան: *Ողբ. բձ. Անկանհմք* (ի ծունկս անկեալ, յատեանն): *Քրգ. Ասասցուք: Ս. Աստուած՝ որ յարեար: Չկնի՝ Սղմ. ՀԱ. Իջցէ որպէս Կանձրել, Աւտրն., Նորաստեղծեալ: Քրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Աստուած մշտնջենաաւոր* (տես ի կարգին Արեւագալի):

Յերեկոյին՝ ծածկեալ ունելով զՍեղանն, ասասցեն զերիս *Ողորմեայսն* եւ ընթեռնուցուն զԱւետարանսն եւ ապա *Խոնարհեցո* եւ *Ապրեցո: Մեսո. Տէր ասաց ցիս: Քրգ. Ասասցուք: Ս. Աստուած՝ որ յարեար: Հմբ. բձ. Անկանհմք առաջի քո* (ի ծունկս, յատեանն): *Քրգ. Վասն իսաղաղութեան: Աղթ. Հայր գթած: Եւ ապա ընթեռնուցուն շուրջառաւ զընթերցուածսն, որք կան ի ճաշոցի: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եշ. շրկ. գձ. Չանճարեկի լուսոյ: Ս. Աստուած՝ որ ծնար եւ յայտնեցար: Ճշ. ընթ. (Տիտ. 2.11-15: Ստ. 2.1-12): Սրբ. Բապմութիւնք:*

Չկնի Սրբոյ Պատարագի՝ **Նախատօնակ:** Շրկ. դկ. *Խորհուրդ մեծ, իւր սարօքն: Քրգ. Ս. ԿԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*

**Նաւակատիք:
Յերեկոյս ց 13 ամսոյս
նախատօնակ լինի:**

- 6 † ԲՂ. ԳՁ. ՏՕՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ 11
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍ-
ՏՈՍԻ: Ի գիշերին հսկումն է եւ դիցեն
զՍրբութիւնն ի վերայ բազմոցի Սե-
ղանոյն: Չկնի *Ռահ գործեային* երգ՝
*Կուսածին մարդացեալ: Օրհ. դկ. Խոր-
հուրդ մեծ, իւր սարօքն (յատեանն): Ի
Տէր յերկնիցին* եւս եկեցեն յա-
տեանն, յաւարտիլն *Տէր յերկնիցին*
ընթեռնուցուն Աւետարան (ի Սեղանն):
Չփառք ի բարձունսն մինչեւ ի կեսն
ասիցեն եւ ապա զմնացորդ Աւետա-
րանն ընթերցցեն: Ապա զմնացեալ
*Փառք ի բարձունսն երգեսցեն: Քրգ.
Մայր Սուրբ: Ս. Աստուած, որ ծնար եւ
յայտնեցար: Շրկ. դկ. Խորհուրդ մեծ:
Չկնի՝ Օրթի, ապա Աւետարանք եւ
շարականք: Չկնի Արարչականի՝ Ծած-
կեալ խորհուրդն: Քրգ. Խնդր., Կեցո,
Աղթ. Քում ամենապօր եւ հրաշայի
Ծննդեանդ եւ Յայտնութեանդ Քրիս-
տոս Աստուած մեր: Ժմտ. Աստուա-*

ծածին պքեպ խոստովանեալ: (Ժամամուտք երեք են, յաւուրն գմինն ասա): ԵՂ. շրկ. գձ. *Ս. պԱստ.:* Ճշ. ընթ. (Տիտ. 2.11-15: Ստ. 1.18-25): Սրբ. *Բապմութիւնք* է յայսմ ութն աւուրս: Չկնի Սրբոյ Պատարագի կատարի հանդէս Ջրօրհնեաց (տէս ի Տօնացուցի): **Նախատօնակ:** Շրկ. ակ. *Արեգականն արդարութեան:*

Յերեկոյին՝ *Խոնարհեցո* եւ *Ապրեցո՛ Մեսոք. Իջցէ որպէս:* Բրգ. *Մայր Սուրբ:* Յնբ. դկ. *Այսօր Բանն ի Յօրէ* (գվաղուան աւուր Օրհնութիւնն ասա): Չկնի *Հայր գթածին՝* միաբան ելցեն յատեանն Խաչիւ եւ Աւետարանաւ, ինկօք եւ մոմեղինօք եւ զառաջիկայ աւուր Հարցն իւր սարօքն երգեսցեն: Բրգ. *Ս. պԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*

Յայսմ ութն աւուրս կատարի նախատօնակ ընդ աւուրն հարցի:

Միջոց ուտիքն 28 օր է:

- 7 † **ԳՂ. ԳԿ. Բ օր Ս. Ծննդեան:** Չկնի 12
Ճանապարհ մոլորելոցին երգ՝ Չէակիցոյ: Օրհ. դկ. *Այսօր Բանն ի Յօրէ,* իւր սարօքն: (Յայսմ ութն աւուրս զԱրարչականն ըստ պատշաճի աւուրն ասա): Բրգ. *Խնդրեսցուք, Կեցո, Աղթ. Քում ամե-*

նապօր: Ժմտ. Աղաչենք զքեզ: Եւ. շրկ. գկ. Ամենազովելի: Ճշ. ընթ. (Գրծ. 6.8-8.2: Յհ. 12.24-26): Սրբ. Վասն յիշատակի:

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի
հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց:
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ**

Յերեկոյին՝ Քրգ. Մայր Սուրբ: Յմբ. գկ. *Էակից Յօր: Նախատօնակ: Յարցի շրկ. դկ. Սքանչելագործ, իւր սարօքն: Քրգ. Ս. զԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*

- 8 Դ. ԴԶ. Գ օր Ս. Ծննդեան:** Օրհ. գկ. 13
Էակից Յօր, իւր սարօքն: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եւ. շրկ. գձ. Անակզբնական: Յմբ. գձ. Այսօր Գաբրիէլ: Նախատօնակ: Յարցի շրկ. դկ. Որ ի ծոցոյ Յօր: Քրգ. Ս. զԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:
- 9 ԵՂ. ԴԿ. Դ օր Ս. Ծննդեան:** Օրհ. գձ. 14
Այսօր Գաբրիէլ, իւր սարօքն: Ժմտ. Աստուածածին զքեզ: Եւ. շրկ. բձ. Զքեզ Կոյս եւ Մայր: Յմբ. գձ. Այսօր որ յարոռ: Նախատօնակ: Յարցի շրկ. դկ. Որ յանճառելի: Քրգ. Ս. զԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

10 Ուր. ԱԶ. Ե օր Ս. Ծննդեան: Օրհ. գձ. 15
*Այսօր որ յաթոռ, իւր սարօքն: Ժմտ.
 Աղաչենք պեւ: Եշ. շրկ. բձ. Անթա-
 ռամ ծաղիկ: Յմբ. գձ. Անակպրնական
 տեսիլ: Նախատօնակ: Յարցի շրկ. դկ.
 Որ խոնարհեցար: Բրգ. Ս. պԱստ., Կե-
 ցո, Աղթ. Ընկալ Տէր:*

☺ **Լրումն Լուսնի:**

11 Շբ. ԱԿ. Չ օր Ս. Ծննդեան: Օրհ. գձ. 16
*Անակպրնական տեսիլ, իւր սարօքն:
 Ժմտ. Աստուածածին անհարսնա-
 ցեալ: Եշ. շրկ. բձ. Չքեւ Յայր յառաջ:
 Ճշ. ընթ. (Ա Թս. 4.12-17: Յհ. 11.1-46): Յմբ. բձ.
 Անեղանելի բնութիւն: Նախատօնակ:
 Յարցի շրկ. բձ. Փառաւորեալ Աս-
 տուած: Բրգ. Ս. պԱստ., Կեցո, Աղթ.
 Ընկալ Տէր:*

12 † Կիր. ԲԶ. Է օր Ս. Ծննդեան: Օրհ. 17
 բձ. *Անեղանելի բնութիւն, իւր սա-
 րօքն: Ժմտ. Աստուածածին պեւ: Եշ.
 շրկ. բկ. Սիւն լուսոյ: Ճշ. ընթ. (Հռ. 1.1-7: Ղկ.
 2.1-7): Յմբ. դձ. Լոյս ի լուսոյ (յատեանն):
 Նախատօնակ: Յարցի շրկ. աձ. Տնօ-
 րինեցաւ: Բրգ. Ս. պԱստ., Կեցո, Աղթ.
 Ընկալ Տէր:*

- 13 † **ԲՂ. ԲԿ. Ը օր Ս. Ծննդեան: Տօն** 18
Անուանակոչութեան Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի: Չկնի *Աստուած*
անեղին երգ` Չեակիցդ: Օրհ. դձ. *Լոյս*
ի լուսոյ, իւր սարօքն (յատեանն): Չկնի
Տէր յերկնիցին` առանց սաղմոսի
 ասի *Օրթի:* Աւտրն. մինչ յայն տեղին,
 յորում ասէ. «*Փառք ի բարձունսս*»,
 ասասցեն զշարունակութիւնն, ապա
 կարդասցեն զմնացորդ Աւետարա-
 նին եւ ասասցեն. «*Եւ յամենայն ժամ*»:
 Ժմտ. *Աղաչեմք սքեպ:* ԵՂ. շրկ. ած.
Անակիպրն Աստուած: Ճշ. ընթ. (Կդ. 2.8-15:
 Ղկ. 2.21): Յմբ. դձ. *Լոյս ի լուսոյ* (զերիսն
 ի միասին ասա): Քրգ. *Ս. սԱստ., Կեցո,*
Աղթ. Ընկալ Տէր: Նախատօնակ: Ծրկ.
 ակ. *Արեգականն արդարութեան,* իւր
 սարօքն: Քրգ. *Ս. Ճգնաւորօքն:* Աղթ.
Որ ընտրեցեր:
- 14 **ԳՁ. ԳՁ. Տօն Ծննդեան Ս. Յովհան-** 19
նու Կարապետին: Օրհ. ակ. *Արեգա-*
կանն արդարութեան, իւր սարօքն (յա-
 տեանն): Քրգ. *Աստուած մեծ:* Մնկ. եւ
 Յմբ. դկ. *Մարգարէից գերագոյն:* Ժմտ.
Չյառաջընթացութիւն: ԵՂ. շրկ. դկ. *Այ-*
սօր ցնծայ եկեղեցի:

- 15 **ԴԶ. ԳԿ. Պահբ:** Օրհ. Ապշ. գկ. *Քրիստոս Աստուած:* 3րց. Ապշ. Աղցմի դկ. *Չ. Աստուած հարցն մերոց:* Մնկ. գկ. *Օրհնեցէք սՏեր:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Փառաքանութիւն:* 3մբ. գկ. *Տուր մեզ եւ 3ովանի:* 20
- 16 **ԵՂ. ԴԶ. Սրբոցն Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին եւ Աբիսողոմայ սարկաւագին:** Օրհ. Մրտ. դձ. *Այսօր յիշատակ:* 3րց. Մրտ. դձ. *Որք հաղորդեցան:* Մնկ. եւ 3մբ. գձ. *Մանկունք նոր:* Ժմտ. *Չհայրապետականն:* Եշ. շրկ. դձ. *Այսօր երկնայնոցն:* 21
- 17 **Ուր. ԴԿ. Պահբ:** Օրհ. Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած:* 3րց. 3նգ. բկ. *Արարիչ:* Մնկ. *Խաչի* դկ. *Խաչի քո Քրիստոս:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Որ անսկիզբն:* 3մբ. դկ. *Մտցեն:* 22

○ **Վերջին բառորդ Լուսնի:**

- 18 **Շբ. ԱԶ. Սրբոցն Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի ճգնաւորացն:** Օրհ. աձ. *Որ գերապանցեալ, իւր սարօքն (յոգնակի ասել):* Մնկ. բձ. *Պարծանք եկեղեցւոյ:* Ժմտ. *Ճգնաւորք Քրիստոսի:* Եշ. շրկ. աձ. (Ողորմեա) *Որ անմարմնական:* Ճշ. ընթ. (Առ. 23

- 21.15-24: Ես. 19.19-21: Եբր. 11.32-40: Մտ. 10.37-42): Հմբ. ած. *Սուրբ եւ Տէր* եւ *Երկնաբաղաբացին:*
- 19 † Կիր. ԱԿ. Ա կիր. Չկնի Ս. Ծննդեան: 24
Օրհ. ալ. *Երգեցէք: Հրց. դձ. Ծագումն Միածնի: Ժմտ. Միածին Որդի: Եջ. շրկ. ալ. Թագաւորեաց Աստուած: Ճշ. ընթ. (Ես. 54.1-13: Ա Տմ. 1.1-11: Յհ. 2.1-11): Հմբ. ալ. Հրաշայի պարութիւն եւ Կանխեցին:*
- 20 Բշ. ԲՁ. Սրբոցն Թեոդոսի թագաւորին եւ մանկանցն Եփեսոսի: 25
Օրհ. ալ. *Որ պերկնաւոր, իւր սարօքն: Մեծ. ած. Երանելի աստուծաւեր: Մնկ. եւ Հմբ. բկ. Ով երանելիդ ամենեցուն: Ժմտ. Որպէս յետ աստուծաւեր թագաւորին: Եջ. շրկ. բձ. (Ողորմեա) Աստուած փրկիչ մեր:*
- 21 Գշ. ԲԿ. Սրբոցն Կիրակոսի եւ 26
մօրն Յուդիտայի եւ սրբոց վկայիցն Գորդիոսի, Պօղիքոսի եւ Գրիգորիսի: Օրհ. Մրտ. բկ. *Շնորհեա մեզ: Հրց. Մրտ. բկ. Բ. Որք ի մարտի: Մնկ. բկ. Յարմատոց բարեաց: Ժմտ. Ի տանարի: Եջ. շրկ. բկ. Յիշեալ մեզ: Հմբ. բկ. Կարդագոյն:*

- 22 **ԴԶ. ԳԶ. Պահք:** Օրհ. Ապշ. գձ. *Չերծո* 27
յիս: Հրց. Ապշ. աձ. Ա. *Որ հայիս:* Մնկ.
 գձ. *Չքեյ բարերանեն:* Ժմտ. *Որ ըստ*
ամենայն: Եշ. շրկ. դկ. *Փառաքանու-*
թիւն: Հմբ. գձ. *Չօրհներգութիւնս* եւ
Պահապան:
- 23 **ԵՇ. ԳԿ. Սրբոցն Վահանայ Գողթ-** 28
նացւոյն, Եւզինեայ կուսին եւ հօրն
նորա Փիլիպպոսի եւ մօրն Կղօղիայ
եւ երկուց եղբարցն Սերգեայ եւ
Ապիտոնի եւ երկուց ներքինեացն:
 Օրհ. Մրտ. գկ. *Այսօր հրեշտակաց:*
 Հրց. Մրտ. գձ. *Որք յտանջանս:* Մնկ.
 եւ *Հմբ. բձ. Չարմանայի Է* (յԱտեանն):
 Ժմտ. *Ի տանարի:* Եշ. շրկ. գկ. *Ճգնա-*
ւորք:
- 24 **Ուր. ԴԶ. Պահք:** Օրհ. Ապշ. դձ. *Համ-* 29
բառնամ: Հրց. Հնգ. աձ. *Օրհնեայ ես:*
 Մնկ. *Խաչի դձ. Չօրութիւն:* Ժմտ. *Որ*
ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. *Որ անս-*
կիպն: Հմբ. դձ. *Չքեյ կարդամք:*
- 25 **Շբ. ԴԿ. Սրբոց հայրապետացն Ա-** 30
թանասի եւ Կիւրղի: Օրհ. ակ. *Որք*
կարդարեցին: Հրց. Մրտ. գձ. *Բ. Որ*
կանչաի: Մնկ. գձ. *Մանկունք նոր:*
 Ժմտ. *Չհայրապետականն:* Եշ. շրկ.

դձ. Այսօր երկնայնոցն: Ճշ. ընթ. (Առ. 11.2-11: Ես. 61.3-7: Եբր. 13.7-9: Յհ. 16.33-17.8):
 Հմբ. աձ. Սուրբ եւ Տէր եւ Երկնաքա-
 ղաքացին:

● Ծնունդ Լուսնի:

- 26 † Կիր. ԱԶ. Բ կիր. Չկնի Ս. Ծննդեան: 1
 Օրհ. աձ. Երգեսցուք: Հրց. գկ. Այսօր
 պենաւ: Ժմտ. Միածին Որդի: Եշ. շրկ.
 աձ. Չթագաւորն փառաց: Ճշ. ընթ. (Ես.
 58.13-59.7: Ա Տմ. 4.12-5.10: Յհ. 3.13-21): Հմբ.
 աձ. Սոսկայի տեսիլ եւ Փայլակնաձև:
- 27 Բշ. ԱԿ. Սրբոցն վկայիցն Եւզինեո- 2
 սի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կան-
 դիտոսի եւ Ակիւղասայ: Օրհ. Մրտ.
 ալ. Յամենայն ժամ: Հրց. Մրտ. դձ. Ա.
 Յուսացեալքն: Մնկ. ալ. Ճգնաւորք:
 Ժմտ. Ի տաճարի: Եշ. շրկ. ալ. Ի տա-
 ճարի: Հմբ. ալ. Պարծանք հաւատոյ:
- 28 Գշ. ԲԶ. Սրբոցն Անդրէի զօրավա- 3
 րին եւ բանակի նորին, Կալիսիկո-
 սի եւ Դոմետեայ վկայիցն: Օրհ. բձ.
 Օրհնեն պեւ: Հրց. գկ. Չինուորու-
 թիւնք: Մնկ. աձ. Չինաւորն Զրիտոռ-
 սի: Ժմտ. Չօրական: Եշ. շրկ. բձ. Ու-
 րախանան: Հմբ. բձ. Չքեւ Տէր օրհնեն:

- 29 **ԴԶ. ԲԿ. Պահք:** Օրհ. Ապշ. բկ. *Յամենայն ժամ:* Հրց. Ապշ. ած. Բ. *Որ համագոյից:* Մնկ. բկ. *Արթունք:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Փառաբանութիւն:* Հմբ. բկ. *Յօգնութիւն:*
- 30 **ԵՂ. ԳԶ. Սրբոցն Անդրիանոսի եւ Կնոջ նորա Անատոլայ, Թէոդորոսի եւ Ելեւթիւրոսի վկայիցն:** Օրհ. գծ. *Չարիական մահ:* Հրց. Մրտ. դծ. Բ. *Սուրբ եւ Տէր:* Մնկ. գծ. *Այսօր յիշատակ:* Ժմտ. Ի *տաճարի:* Եշ. շրկ. գծ. *Պայծառացիր:* Հմբ. գծ. *Չպսակիչն սրբոց:*
- 31 **Ուր. ԳԿ. Պահք:** Օրհ. Ապշ. գկ. *Քրիստոս Աստուած:* Հրց. Հնգ. ալ. *Գոհարանեմք:* Մնկ. *Խաչի* գկ. *Ով պահապան:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Որ անսկիզբն:* Հմբ. գկ. *Տուր մեզ եւ Հովանի:*

Վերջ բառասուն աւուրց առաջնոյ մասին ձմերան:



ՓԵՏՐՈՒԱՐ

29 ՕՐ



ԶՐՅՈՄՆ

- 1 Շք. ԴԶ. Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին: Օրհ. ակ. *Որք պարդարեցին:* Հրց. Մրտ. դձ. *Սքանչելագործ:* Մնկ. բձ. *Որ յուսով:* Ժմտ. *Չհայրապետականն:* Եշ. շրկ. դձ. *Այսօր երկնայնոցն:* Ճշ. ընթ. (Առ. 8.33-36: Ովս. 10.12: Ամս. 5.10-14: Գրծ. 20.25-32: Յհ. 10.11-16): Հմբ. ամ. *Սուրբ եւ Տէր եւ Երկնաբարդաբացին:* 7

Սկիզբն յիսուն ատուրց
Երկրորդ մասին ձմերան:

- 2 † Կիր. ԴԿ. Գ կիր. Չկնի Ս. Ծննդեան: Օրհ. դկ. *Յաղթական:* Հրց. դձ. *Փառաւորելով:* Մեծ. դձ. *Ուրախացիր Աստուածածին:* Ժմտ. *Միածին Որդի:* Եշ. շրկ. դկ. *Որ անբաւելի:* Ճշ. ընթ. (Ես. 61.10-62.9: Բ Տմ. 2.15-26: Յհ. 6.15-21): Հմբ. 8

դկ. Փառք յարութեան, Յարուցեալ է
Տէրն եւ Փառք Բրիստոսի:

Բարեկենդան

Առաջաւորաց պահոց:

○ Առաջին քառորդ Լուսնի:

3 ԲՉ. ԱԶ. Ա օր Առաջաւորաց պահոց: 9

Օրհ. Ապշ. ած. Հայր բապունդորմ:
Հրց. ած. Աղցմի. Դ. Երգէին ման-
կունքն: Մնկ. ած. Չառաւօտու: Հմբ.
ած. Ինձ օգնութիւն եւ Համբարձի:

Ի չորիս աւուրսն պահոցս այսո-
ցիկ Հարց պաղցմիսն ասա կարգաւ եւ
զայլսն ամենայն ըստ կարգի պահոց:

Ի ճաշուն գերիս Ողորմեայսն միայն
ասա, ապա պճոզոց եւ ոչ այլ ինչ, զի
ընթերցմունք ոչ գոն: Իսկ յերեկոյսն
ըստ կարգի Պահոց եւ Խաղաղական,
որպէս ի հասարակ աւուրս պահոց:

4 ԳՉ. ԱԿ. Բ օր Առաջաւորաց պահոց: 10

Օրհ. Ապշ. ակ. Ծով կենցաղոյս: Հրց.
Ապշ. Աղցմի. ակ. Ե. Փառաւորեալ:
Մնկ. ակ. Լոյս փառաց: Հմբ. ակ. Օգ-
նական:

5 ԴՉ. ԲԶ. Գ օր Առաջաւորաց պահոց: 11

Օրհ. Ապշ. բծ. Դարձո պատումն: Հրց.
Ապշ. բծ. Աղցմի. Բ. Որ ասրեցուցեր:

Մնկ. բձ. *Մանկունք*: Յմբ. բձ. *Համբառնայով*:

6 ԵՂ. ԲԿ. Դ օր Առաջաւորաց պահոց: 12

Օրհ. Ապշ. բկ. *Յամենայն ժամ*: Յրց. Ապշ. բձ. *Աղցմի. Գ. Որ տհաւոր*: Մնկ. բկ. *Արթունք*: Յմբ. բկ. *Յօգնութիւն*:

7 Ուր. ԳՁ. Ե օր Առաջաւորաց պահոց: 13

Յիշատակ Յովնանու մարգարէին: Օրհ. Ապշ. գձ. *Չերծո՛ւ յիս*: Յրց. դկ. *ստղ. Որ պանճատելի*, իւր սարօքն: Մեծ. դկ. *Մարգարէն ի փորոյ կիտին*: Մնկ. դձ. *Որ առաքեցեր զՅովնան*: *Չհանդուրժեալ*: Աղթ. *Օգնեա մեզ*: *Չկնի Ողորմեայիցն՝ Գիրք Յովնանու մարգարէին եւ ապա Յոգւոց*: Յմբ. բկ. *Ապաշխարութեամբ ապրեցաւ*:

8 Շբ. ԳԿ. Սրբոցն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինաւորացն: 14

ակ. *Ամենասուրբ Երրորդութեան*: Յրց. գկ. *Չինուորութիւնք*: Մնկ. եւ ճշ. շրկ. աձ. *Չինաւորն Զրիատոսի*: Ժմտ. *Չօրական եւ վկայ*: Ճշ. ընթ. (Առ. 3.13-17: Ես. 41.1-3: Եփս. 6.10-17: Ղկ. 21.10-19): Յմբ. աձ. *Սուրբ եւ Տէր եւ Երկնաքաղաքացին*:

9 † Կիր. ԴՁ. Դ կիր. Չկնի Ս. Ծննդեան: 15
 Օրհ. դձ. *Օրհնէաքուք:* Հրց. դկ. *Անսկիպրն բանդ:* Ժմտ. *Միածին Որդի:*
 Եշ. շրկ. դձ. *Թագաւոր Բրիտոս:* Ճշ. ընթ. (Ես. 63.7-18: Բ Տմ. 3.1-12: Յհ. 6.22-32):
 Հմբ. դձ. *Չյարութիւն աստուածորդւոյն, Փառաւորեալ եւ Չանճառելի:*

☺ **Լրումն Լուսնի:**

Ջերմութիւն իջանէ յօդս:

10 Բշ. ԴԿ. Սրբոց Ատոզմեանց զօրա- 16
վարացն: Օրհ. դկ. *Ի յիշատակս:* Հրց. գկ. *Չինուորութիւնք:* Մնկ. եւ Հմբ. ակ. *Աղաչեմք զքեզ:* Ժմտ. *Չօրական:* Եշ. շրկ. դկ. *Այսօր եկեղեցի:*

11 Գշ. ԱՁ. Սրբոց Սուբիասեանց վկա- 17
յիցն: Օրհ. ամ. *Ժողովեալքս:* Հրց. դկ. *Ա. Առ քեզ Աստուած:* Մնկ. եւ Հմբ. բձ. *Ստուգութեամբ* (յատեանն): Ժմտ. *Ի տաճարի:* Եշ. շրկ. ամ. *Պարծեացին:*

12 Դշ. ԱԿ. Պահք: Օրհ. Ապշ. ակ. *Ծով* 18
կենցաղոյս: Հրց. Հնգ գձ. *Օրհնէմք զքեզ:* Մնկ. ակ. *Լոյս փառաց:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Փառաբանութիւն:* Հմբ. ակ. *Օգնական:*

13 Եշ. ԲՁ. Սրբոց Ոսկեանց քահանա- 19
յիցն: Օրհ. Մրտ. բձ. *Օրհնեն զքեզ:*

Յրց. Մրտ. դկ. Բ. *Որ պիտաշատիստ:*
 Մնկ. գձ. *Որք արժանաւորեցայք:*
 Ժմտ. *Չհայրապետականն:* Եջ. շրկ.
 քձ. *Ուրախանան:*

*Յերեկոյին՝ Խոնարհեցո եւ Ապ-
 րեցո: Լոյս ցուարթ (ի ձայն): Մեսդ.
 Գալստեան՝ Օրհնեալ եկեալ: Ս. Աս-
 տուած՝ որ եկիր եւ գալոց ես: Յմբ. ամ.
 Մարմնացեալդ ի Կուսէն: Աղթ. Յայր
 գթած: Չկնի՝ Եւ եւս իսաղաղութեան:
 Օրհնութիւն եւ փառք: Նախատո-
 նակ: Շրկ. դձ. Այսօր անսկզբնական,
 իւր սարօքն: Գիրք, Աւետարան, Ան-
 դաստան: Տաղ՝ Քրիստոս փառաց:
 Քրգ. Խնդրեցուք, Կեցո, Աղթ. Թագ.
 իսաղաղութեան:*

Խոտելի է շրջելն գիրով:

14 † Ուր. ԲԿ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ: Տօն 20
 քառասնօրեայ գալստեանն Քրիս-
 տոսի ի Տաճարն: Ի գիշերին հսկումն
 է եւ դիցեն զՍրբութիւնն ի վերայ
 բազմոցի Սեղանոյն: Չկնի Աստուած
 անեղին երգ՝ Ըստ օրինացն Մովսի-
 սի: Օրհ. դձ. Այսօր անսկզբնական,
 իւր սարօքն: Ալէ. Օրհնեալ եկեալ: Եւ
 ապա կարդացեն զչորեսին Աւետա-

րանսն ի չորիս անկիւնս եկեղեցւոյն
 (տե՛ս ի Տօնացուցի): Զրց. դձ. *Օրհնեմք:*
Չկնի Փառք ի բարձունսին Առաւօ-
տու երգ՝ Արեգակն արդարութեան:
 Բրգ. *Մայր Սուրբ: Սուրբ Ատոռւած՝ որ*
եկիր եւ գալոց ես: Եւ ընթեռնուցուն
գերեկոյին Գիրք եւ գԱւետարանն:
Չհանդուրժեալ, Բրգ. Խնդր., Կեցո,
Աղթ. Բում ամենապօր գալստեանդ:
Ժմտ. Ծերունին պսօր եւ Անսկսբնա-
կան: Ծշ. շրկ. դկ. Անսկսիքն Բանն: Ծշ.
ընթ. (Ես. 24.21-25.8: Գրծ. 7.47-50: Գղ. 4.1-7:
Ղկ. 2.41-52): Սրբ. Բապմութիւնք:

Յերեկոյին՝ Մեսդ. *Մեծացուցէ:*
Բրկ. Մայր սուրբ: Ս. Ատոռւած՝ որ
եկիր եւ գալոց ես: Զմբ. դկ. Այսօր ի
Տաճարն եւ Ի սկսբանէ Բանն: Բրգ. Ս.
վԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

15 Ծբ. ԳՁ. Սրբոյն Իսահակայ Պարթե- 21
ւի հայրապետին մերոյ: Օրհ. դկ. *Ար-*
մատ ճշմարիտ (տե՛ս բձ. Ով երջանիկ):
 Զրց. *(վժռռանցն ասան)* ակ. *Որ վղոյս*
Ատոռւածային: Մնկ. դկ. Որ յարմա-
տոց: Ժմտ. Չհայրապետականն: Ծշ.
շրկ. գկ. Զովիւ քաջ: Ծշ. ընթ. (Իմս. 7.12-18:
Ես. 61.3-7: Երբ. 13.17-21: Յհ. 10.11-16): Զմբ.

աձ. *Սուրբ եւ Տէր եւ Երկնաքաղաքացին:*

16 † Կիր. ԳԿ. Ե կիր. Զկնի Ս. Ծննդեան: 22

Օրհ. գկ. *Երգեցէք:* Հրց. դկ. 2. *Որ յահեղակերպ:* Մեծ. դկ. *Աստուածածին Մայր լուսոյ:* Ժմտ. *Միածին Որդի:* Եշ. շրկ. գկ. *Լուսով աստուածութեան:* Ճշ. ընթ. (Ես. 63.18-64.12: Տիտ. 1.1-11: Յհ. 7.37-52): Հմբ. գկ. *Տեսիլ փայլակնաձև եւ Յանճար փառաց:*

○ Վերջին քառորդ Լուսնի:

Ձերմութիւն իջանէ ի ջուրս:

17 Բշ. ԴԶ. Սրբոցն Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի 23

եւ Բենիամինի սարկաւազացն, եւ սրբոց վկայիցն Աբդմսեհի, Որմզդանայ եւ Սայենի: Օրհ. Մրտ. դձ. *Այսօր յիշատակ:* Հրց. Մրտ. աձ. *Չքեպ արդար:* Մնկ. դձ. *Չքեպ կարդային:* Ժմտ. Ի տաճարի: Եշ. շրկն. դձ. *Ճգնութիւնք:* Հմբ. դձ. *Յիշատակ է: Նախատօնակ:* Շրկ. դձ. *Որ յառաջագոյն, իւր սարօքն: Բրգ. Ս. Ճգնաւորօքն: Աղթ. Որ ընտրեցեր:*

18 Գշ. ԴԿ. Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն: 24

Օրհ. դձ. *Որ յառաջագոյն:*

Հրց. դկ. *Որ անդադար:* Մեծ. դկ. *Նահապետացն:* Մնկ. դկ. *Անճառելի* (յատեանն): *Չկնի Էականին երգ՝ Գոչենք առ ձեզ սուրբ նահատակք* (տես ի Չայնքաղ շարական տպ. 1888, 1999, յերես 429): Ժմտ. *Յաշխարհական ի ճակատամարտին:* Եշ. շրկ. դձ. *Պայծառացան:* Ճշ. ընթ. (Իմս. 5.16-23: Ես. 35.1-2: 61.6-7: Ա Պտ. 1.3-9: Ղկ. 12.4-10): Հմբ. բձ. *Երգենք ձեզ:*

19 **ԴԶ. Պահք:** Օրհ. Ապշ. աձ. *Հայր* 25
բապունդորմ: Հրց. Հնգ. դձ. *Որ փառոք չօր:* Մնկ. աձ. *Չառաւօտու:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Փառաբանութիւն:* Հմբ. աձ. *Ինձ օգնութիւն եւ Համբարձի:* **Նախատօնակ:** Շրկ. դկ. *Նորահրաշ պատկաւոր, իւր սարօքն:* Բրգ. Ս. *Ճգնաւորօքն:* Աղթ. *Պատկիչ սրբոց:*

20 † **ԵՂ. ԱԿ. Սրբոց Վարդանանց զօ-** 26
րավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին: Օրհ. դկ. *Նորահրաշ* (յԱնճառելին զհետն ասա՝ յատեանն): Թագ. յաւիտ.՝ *Այսօր դասք:* Հրց. դկ. *Որ անդադար:* Մնկ. եւ Հմբ.

ստղ. դկ. *Արիացեալք: Չկնի Ճառագայթեային երգ՝ Գոչեմք առ ձեզ: Ժմտ. Յաշխարհական: Եջ. շրկ. դկ. Արեգակն արդարութեան: Ըջ. ընթ. (Իմս. 3.1-8: Ես. 49.8-9: Եբր. 12.1-7: Ղկ. 6.20-26):*
 Սրբ. *Վասն յիշատակի:*

**Տօն անուանակոչութեան
 Նորին Վեհափառութեան
 Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
 Սրբազնագոյն Կաթողիկոսի
 Ամենայն Հայոց:**

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի
 Մաղթանք Հայրապետական
 յամենայն եկեղեցիս Հայաստանեայց:
 Ի մէջ Սրբոյ Պատարագի
 կատարի հոգեհանգիստ վասն
 համօրէն ննջեցելոց ազգիս հայոց:
 Յիշատակ մեռելոց եւ տօն ազգային:**

21 Ուր. ԲԶ. Պահք: Օրհ. Ապշ. բձ. *Դար- 27*
*ձոս պատումն: Հրց. Հնգ. դկ. Յախ-
 տենից Աստուած: Մնկ. Խաչի բձ.
 Ապախնեցաք: Ժմտ. Որ ըստ ամե-
 նայն: Եջ. շրկ. դկ. Որ անսկիզբն: Հմբ.
 բձ. Համբարձնալով:*

22 Ծբ. ԲԿ. Կոստանդնուպոլսոյ Ս. Ժո- 28
ղովոյն՝ հարիւր յիսուն Հայրապե-

տացն (381 թ.): Օրհ. գձ. *Այսօր սրբոց հայրապետացն*, իւր սարօքն: Մնկ. գձ. *Ով հրաշայի եւ Ի Սուրբ Երրորդութենէն: Փառք Յօր գԳ. տունն՝ Ապաւինիմք, Այժմ եւ միշտն՝* գձ. *Աղբերացուցես* (յատեանն):

Յորժամ զՄանկունքն երգեն, ծածկեն զՍեղանն վարագուրիւ: Իսկ յասելն «Ի Սուրբ Երրորդութենէն» բանան զվարագոյրն եւ հերթապահ աւագ երէցն շուրջառաւ Աւետարանն ի ձեռին իջանէ ի խորանէն եւ ժամօրհնողն շուրջառաւ խնկարկէ առաջի Ս. Աւետարանին, գան կանգնեն առաջի Ս. Բեմին եւ համբուրեն զՍուրբ Աւետարանն:

Չկնի *Սուրբ եւ Տէր* աղօթից՝ *Տէրն յետ ստեղծմանն: Ժմտ. ս-Յայրապետականն: ԵՂ. շրկ. դձ. Այսօր երկնայնոցն: Ճշ. ընթ. (Եգ. 3.16-19: Բ Կր. 6.1-14: Ստ. 12.22-32):*

Յերեկոյին՝ *Լոյս Կուարթ* (ի թիւ ասացէ ժամօրհնողն): Յմբ. դկ. *Բանն որ ընդ Յօր* (յատեանն, առանց շուրջառի) եւ վարագուրեցեն զՍեղանսն:

Այսուհետև ոչ համբուրեսցեն զԱ-
 ւետարանն, նաև ոչ բարձրացու-
 ցեն *ի Հաւատամքին* եւ *ի Կեցոյին* ի
 տես ժողովրդեանն: *ՉԼոյսս յուարթն*
 ի թիւ ասացեն ի տեղի մաղթա-
 նացն մինչեւ ի Ճաղկագարդն: Ի շա-
 բաթու երեկոյին *Հայր գթած* եւ *Աստ*
օրհնեցէք ոչ գոն: Առանց շուրջառի
 եւ Աւետարանի Քրդ. *Սուրբ Խաչիւս,*
Կեցո, Պահպանեա:

23 † Կիր. ԴԿ. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ: 29

Չկնի *Չքէն գոհանամք* աղօթից գան
 յատեանն եւ ասեն ի թիւ զՍաղմոսն՝
Օրհնեա անձն իմ յՏէր: Ապա դպիրքն
 եղանակեսցեն *յԿանոնագլուխն՝ Օրհ-*
նեցից յքեպ: Ի տեղի *Հանգատեան շա-*
րականի՝ Այսօր անճառ եւ *Տարածեալ:*
 Աւետ. *Խաչելութեան:* Նորոգող, երգ՝
Չարհուրեցան: Օրհ. դկ. *Բանն որ ընդ*
Հօր, իւր սարօքն: Իւղաբերից Աւետա-
 րանն *յԹաղման* մասն կարդա: Չկնի՝
Չամենայն աուրս (երիցս կրկնեա, գլե-
 տինն բարձր): Ի *գիշերի* ասա ի թիւ: Նո-
 րաստեղծեալ՝ երկու տուն: Չկնի *Կեցո,*
 առանց Աւետարանի: Ժմտ. *Առաջի*
Պատուական: Ճշ. շրկ. դկ. *Բանն որ*

ընդ Յօր: Ճշ. ընթ. (Ես. 58.1-14: Հռ. 13.11-14.25: Մտ. 6.1-21): Յմբ. ղկ. Այսօր յօրինակ: Ս. Խաչիւ, Կեցո, Պահպանեա:

Ի պահոցս կիրակեից ճաշու շարականն *ԿՕրհնութեան* առաջին պատկերն ասա, իսկ գլետինն՝ յերեկոյին *Համբարձի: Յաւուրս Մեծի Պահոց* կիրակեից մինչեւ ի *Չատկի կիրակեն*, Չկնի *Օրհնութեան* եւ *Մեծացուցե շարականաց*, սարկաւագն ի թիւ ասացե գբարոզսն: Բրգ. *Չուարճացեալքս* ի *Խնդրեսցուք հաւատովեն* ասա: Ի պահոցս *Հանգստեան շարական*, *Խորհուրդ խորին* եւ *Յայս յարկ նուիրանաց* ոչ գոն:

● Ծնունդ Լուսնի:

Ջերմութիւն իջանէ ի հողն:

24 Բշ. ԱՁ. Ա օր Մեծի Պահոց: Օրհ. 1
 Ապշ. ամ. *Հայր բապունդորս:* Յրց. Ապշ. ամ. *Ա. Որ հայիս:* Մնկ. ամ. *Չառաւօտու:* Յմբ. ամ. *Ինձ օգնութիւն եւ Համբարձի:*

Յայս յերկուս աւուրս, կից ընդ առաւօտեան ժամուն, գերիս *Ողորմեայսն* ասա միայն, որպէս ի հասա-

րակ աւուրս: *Չկնի՝ Գիրք, Հոգւոց:*
Նոյնպէս եւ յերեկոյսն, որպէս ի հա-
սարակ աւուրս պահոց, եւ ոչ այլ ինչ:

- 25 **ԳԶ. ԱԿ. Բ** օր Մեծի Պահոց: Օրհ. 2
Ապշ. ակ. *Ծով կենցաղոյս:* Հրց. Ապշ.
աձ. Բ. *Որ համագոյից:* Մնկ. ակ. *Լոյս*
փառաց: Հմբ. ակ. *Օգնական մեր լեր:*
- 26 **ԴԶ. ԲԶ. Գ** օր Մեծի Պահոց: Օրհ. 3
Ապշ. բձ. *Դարձո պատումն:* Հրց. աձ.
Գ. *Որ յամենայնի:* Մնկ. բձ. *Մանկունք*
եկեղեցւոյ: Հմբ. բձ. *Համբառնալով:*

Այսօր սկիզբն արա կատարել
զկարգ *Ապաշխարութեան* եւ *վարե-*
ւագալի ժամերգութեան եւ սկսեա
վՏեր Ամենակայն յառաւօտուն եւ ի
ճաշուն՝ զմեծ քարոզսն եւ զաղօթսն
եւ *վՈղորմեայից* երգսն, եւ *Չկնի՝*
Խոնարհեցո եւ *Ապրեցո:*

Իսկ յերեկոյսն *վԽաղաղականն*
վՆայեաց սիրովն եւ *վԻ քէն հայ-*
ցեմքն եւ ապա *Հոգւոց* եւ արձակես-
ցեն: (Պահոց լուր աւուրց կարգն այս
Է մինչեւ ի *Ծաղկապարհն*):

- 27 **ԵԶ. ԲԿ. Դ** օր Մեծի Պահոց: Օրհ. 4
Ապշ. բկ. *Յամենայն ժամ:* Հրց. աձ. Ե.

*Բարերանեալ եւ թագաւոր: Մնկ. բկ.
Արթունք: Յմբ. բկ. Յօգնութիւն:*

28 Ուր. ԳԶ. Ե օր Մեծի Պահոց: Օրհ. 5

*Ապշ. գձ. Չերծոցիս: Յրց. աձ. Չ. Բարերանեալ եւ ի յաւիտեան: Մնկ. գձ.
Չքեպ բարերանեն: Յմբ. գձ. Չօրհներգութիւնս եւ Պահապան:*

29 Ծբ. ԳԿ. Չ օր Մեծի Պահոց: Սրբոյն 6

Թեոդորոսի գօրավարին: Ի տեղի
Յանգատեան շարականի Օրհ. Ապշ. գկ. Բրիստոս Աստուած: Աւտրն., Յոգւոց: Աստուած անեղ ոչ գոյ: Օրհ. գկ. Այսօր Յրեշտակաց: Յրց. Մրտ. գկ. Չինուորութիւնք: Մնկ. դձ. Որ ընտրեցեր: Ժմտ. Չօրական եւ վկայ: Եշ. շրկ. աձ. Չինաւորն Բրիստոսի: Ծշ. ընթ. (Իմս. 8.19-9.5: Ես. 62.6-9: Հռ. 8.28-39: Մտ. 10.16-22): Սրբ. Սրբութիւն Սրբոց:

Յերեկոյին՝ Լոյսս Կուարթ (ի թիւ ասեյ): Ս. Աստուած՝ որ իսաչեցար: Յմբ. դձ. Որ Կօրէնս: Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:



ՄԱՐՏ

31 ՕՐ



ՁՈՒԿՆ

- 1 † Կիր. ԴՁ. Բ կիր. Քառասնորդական 7
Պահոց (Արտաքսման): Ի տեղի Հանգստեան շարականի՝ *Էլից պօրէնս* եւ *Տարածեալ:* Աւտրն. *Խաչելութեան:* *Ետուն ընպել:* Երգ՝ *Տրումահաղորդ:* Օրհ. դձ. *Որ պօրէնս,* իւր սարօքն: Ժմտ. *Առաջի պատուական:* Ճշ. շրկ. դձ. *Որ պօրէնս:* Ճշ. ընթ. (Ղկ. 4.43-5.11: Ես. 33.2-22: Հռ. 12.1-13.10: Ստ. 5.17-48): Սրբ. *Յրեշտակային:* Յմբ. դձ. *Որ գերագոյն:*
- 2 Բշ. ԴԿ. Ը օր Մեծի Պահոց: Օրհ. Ապշ. 8
դկ. *Քրիստոս Աստուած յոյս:* Յրց. ալ. Ա. *Չանուն քո Քրիստոս:* Մնկ. դկ. *Էանուն Տեառն:* Յմբ. դկ. *Մտցեն աղօթք իմ:*

○ Առաջին քառորդ Լուսնի:

Սկիզբն պառաւանց ցրտոյն,
որ տուէ եօթն տիւ եւ ութ գիշեր:

Օ	ՄԱՐՏ	49	Լ
3	ԳՂ. ԱԶ. Թ օր Մեծի Պահոց: Օրհ. Ապշ. ած. <i>Հայր բապունողորմ:</i> Հրց. ալ. Բ. <i>Որ խոնարհեցար:</i> Մնկ. ած. <i>Չառաւօտու:</i> Հմբ. ած. <i>Ինձ օգնութիւն եւ Համբարձի:</i>	9	
4	ԴՂ. ԱԿ. Ժ օր Մեծի Պահոց: Օրհ. Ապշ. ալ. <i>Ծով կենցաղոյս:</i> Հրց. ալ. Գ. <i>Աստուած հարցն մերոց:</i> Մնկ. ալ. <i>Լոյս փառաց :</i> Հմբ. ալ. <i>Օգնական:</i>	10	
5	ԵՂ. ԲԶ. ԺԱ օր Մեծի Պահոց: Օրհ. Ապշ. բծ. <i>Դարձոս պցասունն:</i> Հրց. ալ. Դ. <i>Օրհնեալ եւ փառաւորեալ:</i> Մնկ. բծ. <i>Մանկունք:</i> Հմբ. բծ. <i>Համբարնալով:</i>	11	
6	Ուր. ԲԿ. ԺԲ օր Մեծի Պահոց: Օրհ. Ապշ. բկ. <i>Յամենայն ժամ:</i> Հրց. ալ. Զ. <i>Չանճառ էութիւն:</i> Մնկ. բկ. <i>Արթունք:</i> Հմբ. բկ. <i>Յօգնութիւն:</i>	12	
7	Շբ. ԳԶ. ԺԳ օր Մեծի Պահոց: Սրբոցն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին, եւ միւս Կիւրղի եպիսկոպոսին, եւ մօրն նորա Աննայի: Ի տեղի <i>Հանգստեան շարականի՝</i> Օրհ. Ապշ. գծ. <i>Չերծոս պիս:</i> Օրհ. Մրտ. գծ. <i>Չարիական մահ սրբոց:</i> Հրց. Մրտ. դծ. <i>Որք հաղորդեցան:</i> Մնկ. գծ. <i>Մանկունք նոր Սիովնի:</i> Ժմտ. <i>Չհայրապետականն:</i>	13	

Ճշ. շրկ. գծ. *Չառաջնորդու:* Ճշ. ընթ. (Առ. 11.2-11: Ես. 61.3-7: Բ Տմ. 4.1-8: Յն. 10.11-16):

Յերեկոյին՝ Լոյսս պուլարթ (ի թիւ ասել):
Ս. Աստուած՝ որ խաչեցար: Յմբ. գկ.
Օրհնենք: Ս. *Խաչիւս, Կեցո, Աղթ.*
Պահպանեա:

8 † Կիր. ԳԿ. Գ կիր. Քառասնորդական 14

պահոց (Անառակին): Ի տեղի *Հան-*
գաւտեան շարականի՝ Խնամով սի-
րոյն եւ Տարածեալ: Աւտրն. *Խաչելու-*
թեան: *Բարբառելով:* Երգ՝ *Չարհու-*
րեցան: Օրհ. գկ. *Օրհնենք պքեպ,* իւր
 սարօքն: Ժմտ. *Առաջի պատուական:*
 Ճշ. շրկ. գկ. *Օրհնենք պքեպ:* Ճշ. ընթ. (Ես.
 54.11-55.13: Բ Կր. 6.1-7.1: Ղկ. 15.1-32): Սրբ.
Հրեշտակային: Յմբ. գկ. *Լոյսս ի լուսոյ:*

9 Բշ. ԴՁ. ԺԵ օր Մեծի Պահոց: Օրհ. 15

Ապշ. դձ. *Համբարնամ :* Հրգ. Ապշ. բձ.
 Ա. *Օրհնեալ Տէր Աստուած հարցն:*
 Մնկ. դձ. *Մանկունք:* Յմբ. դձ. *Չքեպ*
կարդամք:

☺ **Լրումն Լուսնի:**

Վերջ պառաւանց ցրտոյն:

10 Գշ. ԴԿ. ԺՁ օր Մեծի Պահոց: Օրհ. 16

Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած:* Հրգ. բձ.

Դ. Ուղիղ են ճանապարհք: Մնկ. դկ. Է անուն: Յմբ. դկ. Մոցեն:

- 11 **ԴԶ. ԱԶ. ԺԷ օր Մեծի Պահոց:** Օրհ. 17
 Ապշ. ած. *Հայր բապունդորմ:* Հրց. բկ. *Բ. Որ հարցն մերոց:* Մնկ. ած. *Չառաւօտու:* Յմբ. ած. *Ինձ օգնութիւն եւ Համբարձի:*
- 12 **ԵԶ. ԱԿ. ԺԸ օր Մեծի Պահոց:** Օրհ. 18
 Ապշ. ակ. *Ծով կենցաղոյս:* Հրց. բկ. *Գ. Մանկունքն գերեալք:* Մնկ. ակ. *Լոյս փառաց:* Յմբ. ակ. *Օգնական:*
- 13 **Ուր. ԲԶ. ԺԹ օր Մեծի Պահոց:** Օրհ. 19
 Ապշ. բծ. *Դարձոս պատումն:* Հրց. բկ. ստղ. *Աստուած հօր:* Մնկ. բծ. *Մանկունք եկեղեցւոյ:* Յմբ. բծ. *Համբարնաւով:*
- 14 **Շբ. ԲԿ. Ի օր Մեծի Պահոց:** Սրբոցն 20
Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, հայրապետին մերոյ Յովհաննու Օծնեցւոյն, վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Ի տեղի *Հանգստեան* շարականի՝ Օրհ. Ապշ. բկ. *Յամենայն ժամ:* Օրհ. ակ. *Որք վարդարեցին, իւր սարօքն:* Մնկ. գծ. *Նմանեալ Մովսիսի:* Ժմտ. *Չհայրապետականն:*

Ճշ. շրկ. գձ. *Չառաջնորդա:* Ճշ. ընթ. (Առ. 20.6-22: Բրք. 4.21-24: Բ Կր. 4.1-11: Յհ. 9.39-10.10):

Յերեկոյին՝ *Լոյս պուարթ* (ի թիւ ասել): *Ս. Աստուած՝ որ խաչեցար:* Յնք. գձ. *Որ արարեր:* Բրգ. *Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

15 † **Կիր. ԳՁ. Դ կիր. Քառասնորդա-** 21

կան Պահոց (Տնտեսին): Ի տեղի Յանգաւտեան շարականի՝ *Ճառագայթ փառաց եւ Տարածեալ:* Աւտրն. *Խաչելութեան:* Աղթերացն: Երգ՝ *Տրտմահաղորդ:* Օրհ. գձ. *Որ արարեր, իւր սարօքն:* Ժմտ. *Առաջի պատուական:* Ճշ. ընթ. (Ես. 56.1-57.21: Եփս. 4.17-5.14: Ղկ. 16.1-31): Սրբ. *Յրեշտակային:* Յնք. գձ. *Որ տիրականդ:* Բրգ. *Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

16 **Բշ. ԳԿ. ԻԲ օր Մեծի Պահոց:** Օրհ. 22

Ապշ. գկ. *Զրիստոս Աստուած:* Յրց. գձ. *Ա. Փառաւորեալ է անուն քո:* Մնկ. գկ. *Օրհնեցէք պՏեր:* Յնք. գկ. *Տուր մեկ Տեր եւ Յովանի:*

○ **Վերջին քառորդ Լուսնի:**

17 **Գշ. ԴՁ. ԻԳ օր Մեծի Պահոց:** Օրհ. 23

Ապշ. դձ. *Յամբառնամ:* Յրց. գձ. *Բ.*

*Փառաւորեալ է անունն քո: Մնկ. դձ.
Մանկունք: Յմբ. դձ. Չքեպ կարդանք:*

- 18 **ԴԶ. ԴԿ. ԻԴ օր Մեծի Պահոց:** Օրհ. 24
*Ապշ. դկ. Բրիստոս Աստուած: Յրց. գձ.
Դ. Յարցն մերոց Աստուած: Մնկ. դկ. Է
անունն: Յմբ. դկ. Մոցեն:*

Միջինք:

**Այսօր սկսանել գտեղիսն յերեկոյս
գվերջին ուրբաթն Մեծի Պահոց:**

- 19 **ԵԶ. ԱԶ. ԻԵ օր Մեծի Պահոց:** Օրհ. 25
*Ապշ. աձ. Յայր բապունհորս: Յրց. գձ.
Չ. Օրհնեալ ես Տէր.. Վասն ուխտի:
Մնկ. աձ. Չառաւօտու: Յմբ. աձ. Ինձ
օգնութիւն եւ Յամբարձի:*

- 20 **Ուր. ԱԿ. ԻՉ օր Մեծի Պահոց:** Օրհ. 26
*Ապշ. ակ. Ծով կենցաղոյս: Յրց. գկ. Բ.
Աստուած բարձրեալ: Մնկ. ակ. Լոյս
փառաց: Յմբ. ակ. Օգնական:*

**Վերջ յիսուն աւուրց
երկրորդ մասին ձմերան:**

**Գարնանամուտ եւ հասարակած
տիւ եւ գիշեր հաւասար:**

- 21 **Շբ. ԲԶ. ԻԷ օր Մեծի Պահոց:** Սրբոց 27
Մանկանցն բառասնից որք ի Մե-

բաստիա կատարեցան: Ի տեղի *հանգառեան շարականի՝* Օրհ. Ապշ. բձ. *Դարձոն պցասումն:* Աւետարան, *Յոզուց:* Օրհ. գկ. Այսօր ընդ անմարմնոցն, իւր սարօքն: Ժմտ. *Գնալով փառաց:* Եշ. շրկ. գձ. Այսօր մեծապէս: Ճշ. ընթ. (Իմս. 3.1-8: Նւ. 2.1-4: Ես. 43.1-3: Եփս. 6.10-18: Ստ. 13.43-52):

Յերեկոյին՝ *Լոյս պուարթ* (ի թիւ ասել): Մետդ. *Ետուր երկիւղածաց:* Ս. Աստուած՝ որ խաչեցար: Յմբ. բկ. *Որ պատուիրան:* Քրգ. Ս. *Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

22 † Կիր. ԲԿ. Ե Կիր. Քառասնորդա- 28

կան Պահոց (Դատաւորին): Ի տեղի *Յանգառեան շարականի՝ Չար կապանաց* եւ *Տարածեալ:* Աւտրն. *Խաչելութեան:* Նորոգող: Երգ՝ *Չարիւրեցան:* Օրհ. բկ. *Որ պատուիրան,* իւր սարօքն: Ժմտ. *Առաջի պատուական:* Եշ. շրկ. բկ. *Որ պատուիրան:* Ճշ. ընթ. (Ես. 65.8-25: Փպ. 3.1-4.9: Ղկ. 17.20-18.14): Սրբ. *Յրեշտակային:* Յմբ. բկ. *Դատաւոր:* Քրգ. Ս. *Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

23 Բշ. ԳՁ. ԻԹ օր Մեծի Պահոց: Օրհ. 29

Ապշ. գձ. *Չերծոն քիս:* Յրց. դձ. Ա. *Յարցն*

*մերոց Աստուած... Երգէին: Մնկ. գձ.
Չքեպ բարեբանեն: Յմբ. գձ. Չօրհնէր-
գութիւնս եւ Պահապան:*

- 24 **ԳՂ. ԳԿ. L** **օր Մեծի Պահոց:** Օրհ. Ապշ. 30
գկ. *Քրիստոս Աստուած: Յրց. Ապշ. դձ.
Բ. Հարցն մերոց Աստուած.. Յաղթող:
Մնկ. գկ. Օրհնէցէք սՏր: Յմբ. գկ.
Տուր մեկ Տր եւ Հովանի:*

● **Չատկական ծնունդ Լուսնի:**

- 25 **ԴՂ. ԴՁ. LԱ** **օր Մեծի Պահոց:** Օրհ. 1
Ապշ. դձ. *Համբարձնամ: Յրց. Ապշ.
դձ. Դ. Որ յամենայնի: Մնկ. դձ. Ման-
կունք: Յմբ. դձ. Չքեպ կարդամք:*
- 26 **ԵՂ. ԴԿ. LԲ** **օր Մեծի Պահոց:** Օրհ. 2
Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած: Յրց.
Ապշ. դձ. Ե. Ճշմարտապէս: Մնկ. դկ. Է
անուն: Յմբ. դկ. Մոցեն:*
- 27 **Ուր. ԱՁ. LԳ** **օր Մեծի Պահոց:** Օրհ. 3
Ապշ. աձ. *Հայր բազումողորմ: Յրց.
դձ. Տր Աստուած մեր: Մնկ. աձ. Չա-
ռաւօտու: Յմբ. աձ. Ինձ օգնութիւն եւ
Համբարձի: Նախատօնակ: Շրկ. գկ.
Այսօր զուարճացեալ, իւր սարօքն (յա-
տեանն): Յասելն շարականի բացցեն
զվարագոյրն Սեղանոյն, յորում Ս.*

Պատարագն մատչի: Քրգ. Ս. Ճգնաւորօքն: Աղթ. Որ ընտրեցեր:

28 † Շք. ԱԿ. ԼԴ որ Մեծի Պահոց: Տօն 4

Է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն: Ի տեղի *Հանգստեան շարականի՝* Օրհ. Ապշ. ակ. *Ծով կենցաղոյս:* Աւտրն., Մղթ. *Հոգւոց:* Օրհ. գկ. *Այսօր պուարճացեալ:* Թագ. յաւիտ.՝ *Այսօր դասք:* Հրց. դկ. *Որ ի Հօրէ:* Մեծ. դկ. *Նահապետացն:* Մնկ. գձ. *Այսօր տօնէ եկեղեցի:* Չկնի *Տէրն յետ ստեղծմանին* երգ՝ *Հաւատարիմ եւ իմաստուն* (Չայնքաղ շարական տպ. 1888, յերես 428): Ժմտ. *Յնծայ այսօր* եւ *Գրիգոր սուրբ քահանայապետ:* Եջ. շրկ. գկ. *Լերինք ամենայն:* Ճշ. ընթ. (Իմս. 1.15-2.22: Սք. 7.7-10: Փպ. 1.12-21: Մտ. 16.24-28): Սրբ. *Ամենակալ:*

Ի պատարագին, յորժամ երգեսցեն *վԼցաք ի բարութեանցն, ծածկեսցեն վՍեղանն:*

Յերեկոյին՝ *Լոյս պուարթ* (ի թիւ ասել): Մեղ. *Ետուր երկիղածաց:* Ս. *Ատուած, որ իսաչեցար:* Հմբ. բձ. *Որ*

Կիրորհուրդ: Քրգ. Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:

29 † Կիր. ԲԶ. Չ կիր. Քառասնորդա- 5

կան Պահոց (Գալստեան): Ի տեղի
*Յանգստեան շարականի՝ Այսօր ան-
 ճառ եւ Տարածեալ: Աւտրն. Խաչե-
 յութեան: Ետուն ընպել: Երգ՝ Տրումա-
 հաղորդ: Օրհ. բձ. Որ կիրորհուրդ, իւր
 սարօքն: Ժմտ. Առաջի պատուական:
 Եշ. շրկ. բձ. Որ կիրորհուրդ: Ճշ. ընթ. (Ես.
 66.1-24: Կղ. 2.8-3.17: Ստ. 22.34-23.39): Սրբ.
 Յրեշտակային: Յմբ. բձ. Ըստ անե-
 տեաց: Քրգ. Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ.
 Պահպանեա:*

30 Բշ. ԲԿ. ԼԶ օր Մեծի Պահոց: Օրհ. 6

*Ապշ. բկ. Յամենայն ժամ: Յրց. դկ.
 Բ. Աստուած հարցն մերոց: Մնկ. բկ.
 Արթունք: Յմբ. բկ. Յօգնութիւն:*

31 Գշ. ԳԶ. ԼԷ օր Մեծի Պահոց: Օրհ. 7

*Ապշ. գձ. Չերծո կիս: Յրց. դկ. Գ.
 Յարցն մերոց: Մնկ. գձ. Չքեպ բարե-
 բանեն: Յմբ. գձ. Չօրհնէրգութիւնս եւ
 Պահասպան:*



ԱՊՐԻԼ

30 ՕՐ



ԽՈՅՆ

- 1 **ԴԶ. ԳԿ. ԼԸ** օր **Մեծի Պահոց:** Օրհ. 8
Ապշ. գկ. *Քրիստոս Աստուած:* Հրց. դկ.
Դ. Օրհնեալ Տէր Աստուած օրհնեալ:
Մնկ. գկ. *Օրհնեցէք սՏէր:* Հմբ. գկ.
Տուր մեզ Տէր եւ Հովանի:
- 2 **ԵԶ. ԴԶ. ԼԹ** օր **Մեծի Պահոց:** Օրհ. 9
Ապշ. դձ. *Համբարանամ:* Հրց. դկ. Ե.
Օրհնեալ ես Տէր: Մնկ. դձ. *Մանկունք:*
Հմբ. դձ. *Չքեզ կարդամք:*
- 3 **ՈԼր. ԴԿ. Խ** օր **Մեծի Պահոց:** Օրհ. 10
Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած:* Հրց. դկ.
ստեղի Օրհնեալ Տէր Աստուած: Մնկ.
դկ. *ստեղի Յոյս իմ:* Չկնի *Չհանդուր-*
ժեալին միաբան ելցեն յառեանն եւ
երգեն սերգս Արևազալից: Հմբ. դկ.
Մոցեն:



Տ. Մկրտիչ Ա Խրիմեան Վանեցի
Ծննդեան 200 ամեակը (1820-2020)

- 4 **Շք. ԱԶ. Յիշատակ Յարութեան Ղա-** 11
գարու: Այսօր սկսեա ասել *ԿՅան-*
գաւտեան շարականն ի պաշտաման
Աւետարանին: Չկնի *Ռահ գործեային*
 երգ՝ *Չայնեցեր առ Ղապարու:* Օրհ.
 աձ. *Այսօր գոյով ի Բերանիա,* իւր սա-
 րօքն: Առաւօտու երգ՝ *Տէր հաներ:*
 Քրգ. *Փառաւորեացուք: Ս. Աստուած՝*
որ իսաչեցար: Մնկ. դկ. ստղ. *Յիսուս*
Միածին: Գիրք, Աւետարան, Հոգւոց:
 Երգ՝ *Տէրն յետ ստեղծմանն:* Քրգ.
Խնդր., Կեցո, Աղթ. Զում ամենապօր:
 Ժմտ. *ԿՂապարու ննջումն եւ Յործամ*
եկեալ: Ճշ. շրկ. դձ. *Որ ի յերկնից:* Ճշ.
 ընթ. (Առ. 14.27-35: Ա Թս. 4.12-17: Յհ. 11.55-
 12.11): Սրբ. *Վասն յիշատակի:*
- Յերեկոյին՝ *Լոյս Կուարթ* (ձայնիւ):
 Մեսդ. *Օրհնեալ եկեալ:* Քրգ. *Ասաս-*
ցուք: Ս. Աստուած՝ որ եկիր եւ զայոց
ես: Հմբ. աձ. *Որ վերօրհնիս* (յատեանն,
 բացցեն զվարագոյրսն): Քրգ. *Խնդր. Կե-*
ցո, Աղթ. Թագ. իսաղաղութեան:
- 5 † **Կիր. ԱԿ. ԾԱՂԿԱԶԱՐԴ:** Ի գիշերին 12
 հսկումն է եւ դիցեն *ԿՍրբութիւնն* ի
 վերայ բազմոցի *Սեղանոյն:* Չկնի *Ճա-*
նապարհ մոլորելոցին երգ՝ *Թագա-*

ւոր փառաց: Օրհ. աճ. Որ վերօրհնիս (յատեանն), իւր սարօքն: Իւղաբերից ԱԼԵՍ. *վթադմանն* միայն կարդա եւ զկնի՝ *Չամենայն աւուրս կենաց իմոց: ՉՏէր յերկնիցն* երգեսցեն յատեանն: ԱՌԱՍՏՈՒԼ երգ՝ *Այսօր մտանէ: Քրգ. Ասացուք: Ս. Աստուած՝ որ եկիր եւ զայոց ես: Գիրք, ԱԼԵՍԱՐԱՆ: Անդաստան: Քրգ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ: Ժմտ. Յորժամ եկեալ: Շրկ. բկ. Յիսուս Միածին: ԱԼԵՍԱՐԱՆ, Հոգւոց: Շրկ. բկ. Այսօր ընդ հրակերպեան: Նորաստեղծեալ (երկու տուն): Քրգ. Խնդր. Կեցո, Աղթ. Քում ամենապօր զալատեանդ: Ժմտ. Յնծա Երուսաղէմ եւ պարդարեա: Եջ. սկսուածք՝ Տէր թագաւորեաց, շրկ. դկ. Անսկիպն: Ճշ. ընթ. (Երգ. 1.1-2.3: Ջք. 9.9-15: Փպ. 4.4-7: Ստ. 20.29-21.17): Սրբ. Հրեշտակային:*

**Յերեկոյին Դոնրացէք
(տես ի Տօնացուցի):**

- 6 ԱԼԱԳ ԲՉ. ԲՁ. Պահք: Օրհ. բճ. *Անեղն ի Հօրէ, իւր սարօքն: Քրգ. Փառաւորեացուք: Ս. Աստուած՝ որ եկիր եւ զայոց ես: Չկնի Մանկանցն՝ Քրգ. Վասն իսադադուրեան: Աղթ. Սուրբ եւ Տէր:*

Սղմ. ՃԳ. (ողբածայն): Աւտր., Արար-
չական, Քրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Քում
ամենապօր եւ հրաշալի գալստեանդ:
(Չմաղթանքն եւս գալստեան ասա
մինչեւ յՈւրբաթ օրն):

Յայսմ երիս աւուրս Արեւազա-
լից կանոնն ոչ գոյ եւ ոչ Տէր ամենա-
կալն եւ ոչ Պատարագ (ի բաց առեալ
վԱւետման տօնն) մատուցանելոյ եւ ոչ
մեծ քարոզից եւ աղօթից: Ի ճաշու
ժամուն զերիս Ողորմեայսն ասաս-
ցես: Չկնի Հանգստեան Շրկ. բձ. Որ
կոչեցեր եւ Հոգւոց:

Յերեկոյին՝ Խոնարհեցո եւ Ապրե-
ցո: Մեսդ. Ուղիղ եղիցին: Գիրք: Քրգ.
Աղաչեսցուք: Ս. Աստուած՝ որ եկիր
եւ գալոց ես: Հմբ. բձ. Որ յանէից: Քրգ.
Վասն խաղաղութեան: Աղթ. Հայր
գթած: Սաղմոս ԿԴ., Աւետարան: Ա-
ռանց կեցոյի՝ Նախատօնակ: Շրկ. ակ.
Խորհուրդ անճառ, իւր սարօքն: Քրգ.
Ս. ՉԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

7 † Աւագ ԳՉ. ԲԿ. Պահբ: Յիշատակ 14
տասն կուսանացն: Աւետումն Ս. Աս-
տուածածնի: Ի տեղի Հանգստեան

շարականի՝ զաւուր Օրի. թկ. Իմաստուն կուսանքն քաղեա եւ զաւուր Աւետարանն կարդա: Չկնի Աստուած անեղին երգ՝ Չայնի առ քեզ: Օրի. ալ. Խորհուրդն անճառ, իւր սարօքն: Ալէ. Ծննդեան: Առաւօտու երգ՝ Իջցէ: Քրգ. Մայր սուրբ: Ս. Աստուած՝ որ եկիր եւ գալոց ես: Չկնի՝ Աւետման Գիրք, Աւորն., Էական, Քրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Քում ամենապօր: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եշ. շրկ. գկ. Աստուածածին խորան: Ճշ. ընթ. (Երգ. 1.1-11: Առ. 11.30-12.4: Ես. 52.7-10: Չք. 2.10-13: Սղք. 3.1-2: Բ Կր. 6.16-7.1: Ղկ. 1.26-38): Սրբ. Բազմութիւնք:

Յերեկոյին՝ Խոնարհեցո եւ Ապրեցո: Մեսդ. Մեծացուցէ: Չաւուր գիրք: Քրգ. Մայր սուրբ: Ս. Աստուած՝ որ եկիր եւ գալոց ես: Յմք. ղկ. Աստուածածին սուրբ կոյս: Չկնի Յայր գթածին՝ Չգեցուցեն տասն մանկունս եւ տացեն ի ձեռս մոմեղէնս վառեալս յօրինակ տասն կուսանացն եւ հանեն զնոսա առաջի Աւետարանին: Սղմ. Ի.Դ. (ողբածայն), Աւորն., Քրգ. Ս. զԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

- 8 Աւագ Դ. ԳՁ. Պահք:** Օրհ. գձ. *Որ յարժոռ փառաց, իւր սարօքն: Առաւօտու երգ՝ Խորհեցան* (ողբածայն): Բրգ. *Աղաչեացուք: Ս. Աստուած՝ որ եկիր եւ գալոց եւ: Խաւարն անգոյ: Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Քում ամենապօր գալստեանդ: Մնկ. եւ Յմբ. գձ. Նոր սքանչելիք:*

Յերեկոյին՝ Մեսդ. *Նայեաց եւ լուր: Ս. Աստուած՝ որ եկիր եւ գալոց եւ: Չկնի Հայր գթածին՝ Սղմ., Աւետարան, Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Թագ. խաղաղութեան:*

☺ **Աւագ լրումն Լուսնի:**

- 9 † Աւագ ԵՂ. ԳԿ. Պահք:** Յիշատակ վերջին ընթերեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Օրհ. գձ. *Վերածգողն երկնից, իւր սարօքն: Առաւօտու երգ՝ Որսացան Կանձն* (ողբածայն): Բրգ. *Փառաւորեացուք: Ս. Աստուած՝ որ եկիր եւ գալոց եւ: Մնկ. ակ. Այսօր կանգնեցաւ: Բրգ. Վասն խաղաղութեան: Աղթ. Սուրբ եւ Տէր: Սղմ. ԴԳ. (ողբածայն): Աւետարան: Ճառագայթեալ: Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Քում ամենապօր գալստեանդ: Ապա կարգ*

արձակելոյ զապաշխարողսն ըստ *Տօնացուցի*:

Ի ճաշուն ծածկեցեն *վՍեղանն* եւ ասացեն զմնացեալ *Ողորմեայսն*: Ապա *Խոնարհեցո* եւ *Ապրեցո*: Մեսոբ, *Գիրք*, *Աւետարան*: Մինչ ընթեռնուցուն զսա, ելցէ պատարագիչն ի *Սեղանն* եւ զգեստաւորիցի եւ քաղեսցէ *վխորհուրդն* մինչեւ ի *Հաւատամքն*: Քրգ. *Աղաչեսցուք*: Ս. *Աստուած՝ որ եկիր եւ գալոց ես*: Հմբ. ալ. *Այսօր կանգնեցաւ*: Քրգ. *Վասն իսաղաղութեան*: Աղթ. *Հայր գթած*: *Սաղմոս*, *Գիրք*, *Աւետարան*: Ապա բացցեն *վՍեղանն* եւ ասացեն *վՀաւատամքն*: Ճշ. ընթ. (Յհ.12.27-43: Ես. 60.20-22: Եզեկ. 36.24-31: Եբր. 10.19-31: Ղկ. 7.36-50: Ծն. 22.1-18: Ես. 61.1-7: Գրծ. 1.15-26: Սր. 14.1-26: Ա. Կր. 11.23-32: Ստ. 26.17-30): Սրբ. *Որ վերանաստիս*:

Յորժամ պատարագիչն հասանիցէ յայն տեղին, յորում ասէ՝ *Եւ տուր մեկ համարձակածայնին*, աւագ երեցն ի բեմն, ունելով ի ձեռին զխաչն եւ զԱւետարանն՝ կարդասցէ զբանն *Սրբոյն Բարսիի* եւ յաւարտիլն, սկսանիցեն *Հայր մեր*:

Յորժամ վճարիցի *Քրիստոս պատարագեալն*, դպիրքն ասացեն զտաղս՝ *Եկայք մարդիկք ամենայն:*

Յերեկոյին՝ զկարգ Ոտնլուային ըստ Տօնացուցի:

Ի գիշերին հսկումն է:

Կարգ Ոտնլուայի - Ճշ. ընթ. (Ելք. 30.17-21: Գ. Թգ. 7.38-40: Բ. Սն. 4.2-6: Ես. 44.2-6: Ա. Կր. 10.1-4: Ա. Յհ. 4.7-21: Յհ. 13.1-11: Յհ. 13.12-15):

10 Աւագ Ուր. ԴԶ. Պահք: Յիշատակ չարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: *Կանոնագլուխ* դձ. *Օրհնեա անձն իմ զՏէր:* Յետ. շրկ. դձ. *Այսօր ի կատարումն* (տես ի Տօնացուցի մինչ երկրորդ *Կանոնագլուխն*): Օրհ. բձ. *Արծաթսիրութեամբն*, իւր սարօքն: Յորժամ հասանիցեն ի *Տէրյերկնից* շարականն, թագուցեն զմի մեծ մնացեալ մոմեղէնն եւ ընթեռնուցուն զկտակն *Մեծի Ուրբաթու* յաղագս խաչելութեանն Քրիստոսի եւ ապա երգեսցեն *Փառք ի բարձունս*, եւ յորժամ վճարիցի, հանցեն զվառեալ մոմն: Բրգ. *Փառաւորեսցուք: Ս. Աստուած՝ որ մատնեցար: Չկնի Ս. Աստուածին՝ Սաղմոս, Աւետարան, Չհանդուրժեալ,*

Քրգ. *Խնդր.*, *Կեցո*, Աղթ. *Քում ամենա-
յօր եւ հրաշայի մատնութեանդ: Խա-
չի քո Քրիստոս: Փառք սուրբ Խաչիդ`
ալէլուիս, սուրբ Մատնութեանդ` ալէ-
լուիս: Խաչն կենարար: Քրգ. Ս. Խա-
չիւս, Աղթ. Պահպանիչ:*

**Այսօր ի ցերեկին ծունր կրկնելոյ
հրաման ոչ գոյ մինչեւ ցերեկոյին ժամն:
Ի ճաշու ժամուն կատարեսցեն զկարգ
Խաչելութեանն ըստ Տօնացուցի:**

Կարգ Խաչելութեան - Ճշ. ընթ. (Յվի. 13.16-
18.1: Ղկ. 22.1-65, Սր. 14.27-72: Մտ. 26.31-56,
Ստ. 26.57-75, Յովի. 18.2-27, Յովի. 18.28-
19.16):

Յերեկոյին` *Խոնարհեցո* եւ *Ապրե-
ցո: Լոյս զուարթ* (ձայնիւ): Քրգ. *Աղա-
չեսցուք: Ս. Աստուած` որ խաչեցար* (ի
ծունկս անկեալ, առանց *Փառաւորեայի*):
Յմբ. ղկ. ստղ. *Եկայք հաւատացեալք:*
Աղթ. *Հայր գթած, Ս. Աստուած` որ
թաղեցար* (յոտնկայս, *զՓառաւորեայն*
եւս ասա):

Կարգ Թաղման - Ճշ. ընթ. (Եր. 11.18-12.8,
Ես. 52.13-53.12, Իմս. 2.1-22, Զք. 12.8-14, Ա.
Պետր. 3.17-20, Մատթ. 27.57-61):

Նախատօնակ: Շրկ. բձ. *Պարգեւա-*

տունն ամենեցուն, իւր սարօքն: Կատարեսցեն թափօր թաղմանն (եթէ եղանակն ախորժելի է, զթափօրն ի դուրս կատարեա): Բրգ. *Խնդր., Աղթ. Բուն ամենապօր եւ հրաշալի թաղմանդ: Դիցեն գտուրք Խաչն ի վերայ Սեղանոյն՝ պատեալ սպիտակ դաստառակաւ ի խորհուրդ պատանացն Բրիստոսի: Ապա՝ շրկ. բկ. Խաչի քո Բրիստոսս պտուրք Խաչելութիւնդ քո մեծացուցանեմք եւ պտուրք Թաղումնդ քո փառաւորեմք: Ապա շրկ. բկ. Փառք սուրբ խաչիդ: Շրկ. բկ. Խաչն կենարար: Բրգ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ: Տաղ ողբաձայն՝ Աստուածածին կոյս Մարիամ:*

- 11 † ԱԼԱԳ ՇՐ. ԴԿ. ՊԱԽՔ: ԵՐԱԳԱՅ** 18
Ս. Չատկի: *Յառաջ քան Կօրիւնութիւնն Վախու դատեան ասս (յատեանն):* Օրհ. բձ. *Պարգեւատուն, իւր սարօքն: Բրգ. Փառաւորեսցուք: Ս. Աստուած՝ որ թաղեցար: Մնկ. դկ. սող. Յովսէփ քեզ հաւատացեալ: Աւետարան: Տէրն յետ ստեղծմանն: Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Բուն ամենապօր եւ հրաշալի թաղմանդ: Ապա շրկ. բկ.*

Խաչի քո Զրիառոս, ըստ երեկոյի կանոնին: Փառք սուրբ խաչիդ: Բրգ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ:

Յերեկոյին *Ճրագալուցի*, ծածկեալ ունելով *վՍեղանն* ասացեն գերիս *Ողորմեայսն* եւ զմնացեալն (տես ի Տօնացուցի): Ժմտ. *Զրիառոս յարեաւ: Փոխ՝ Գովեա Երուսաղէմ: Եշ. շրկ. ամ. Յարեաւ Զրիառոս: Ս. Աստուած՝ որ յարեար ի մեռելոց: Ըշ. ընթ. (Ա Կր. 15.1-11: Ստ. 28.1-20): Սրբ. Ով է որպէս: Չկնի Սրբոյ Պատարագի՝ Նախատօնակ: Շրկ. ամ. Այսօր յարեաւ, իւր սարօքն: Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Թագաւոր խաղաղութեան:*

Նաւակատիք:

12 † Կիր. ԱԶ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ 19
ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ՉԱՏԻԿ): Ի գիշերին հսկումն է եւ դիցեն զՍրբութիւնն ի վերայ բազմոցի *Սեղանոյն: Կանոնագլուխ ամ. Դատեա Տէր պայնոսիկ: Օրհ. ամ. Այսօր յարեաւ, իւր սարօքն: Իւղաբերից Աւետարան՝ Յարութեան մասն: (Յայսմ Յինանց կիւրակէից, Իւղաբե-*

րից Աւետարան երից գլխոց յետին փոխն կարդա եւ զՄատթեոսինն՝ լման): Երգ. *Լուսապայծառ հրեշտակն*: Բրգ. *Ասասցուք: Ս. Աստուած՝ որ յարեալք*: (Մինչեւ ի Յամբարձունն երգ եւ Ս. Աստուածն սոքա են): Շրկ. ած. *Այսօր յարեալք*: Գիրք, Աւետարան եւ ապա ասացեն զշարականն եւ ընթեռնուցուն զչորեսին Աւետարանսն դէպ ի չորս կողմունսն աշխարհի: Շրկ. ած. *Որ պանարատ բազուկս: Սաղմոս Գ., Աւետարան, Անդաստան, Բրգ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ: Ժմտ. Քանպի յարեալք*: Շրկ. դկ. *Յիսուս Միածին*: Աւետարան: *Նորաստեղծեալ* (լման ասա): Բրգ. *Խնդր., Աղթ. Քում ամենապօր եւ հրաշալի յարութեանդ*: Շրկ. բկ. *Խաչի քո Բրիտոս*, ըստ վերնոյ կարգին, բայց աստ՝ եւ *պտուրք վթաղումնդ քո մեծացուցանեմք, եւ պտուրք պՅարութիւնդ քո փառաւորեմք: Փառք սուրբ իաչիդ*: Եւ եկեալ երկու-երկու համբուրեցեն զսուրբ Խաչն եւ զԱւետարանն եւ ասացեն զմիմեանս՝ «*Բրիտոս յարեալք ի մեռելոց, ձեպ եւ մեպ մեծ աւե-*

տիք»: Քրգ. *Ս. Խաչիւս*, Աղթ. *Պահպանեալ:* Ժմտ. *Քրիստոս յարեալ:* (Յայսմ շաբաթու ժամամուտն այս է): Եջ. շրկ. ած. *Յարեալ Քրիստոս:* Ճշ. ընթ. (Գրծ. 1.15-26: Սր. 16.2-8):

Յերեկոյին՝ Գիրք, Աւետարանք: **Անդաստան:** Ապա *Խոնարհեցո* եւ *Ապրեցո:* Յնք. ած. *Ընդ լուսանայ:* Աղթ. *Յայր գթած:* *Սաղմոս ՃԽԷ*, *Աւետարան*, Քրգ. *Խնդրեացուք*, *Կեցո*, Աղթ. *Թագաւոր իսաղաղութեան:*

Ուտիք է մեզ մինչ ցՅամբարծումն:

- 13 † **Բշ. ԱԿ. Բ օր Ս. Չատկի:** Օրհ. ալ. 20
